

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. ՓԱՆՈՍՅԱՆ

**ԹԻԹԵՐՆԱԾԱՂԿԱՎՈՐ
ԲՈՒՑՄԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1936

ՅԵՐԵՎԱՆ


30 JAN 2018
30/1

ԳՈԼՏԵՍԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. ՓԱՆՈՍՅԱՆ

ԹԻԹԵՌՆԱԾԱՂԿԱՎՈՐ
ԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոր. պրոֆ. Պ. Ա. ԿԱԼԱՆՔԻՐՅԱՆ



ԳՅՈՒՂՋՐԱՏ 1986 ՅԵՐԵՎԱՆ

ԹԻԹԵՌՆԱԾԱՀԿԱՎՈՐ ԲՈՒՑՈՒԵՐԻ ԱՇԱԿՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկ. Ստալինի առաջադրանքը՝ «մոտագա տարիների ընթացքում յերկրին 7—8 միլիարդ փուլի հացահատիկ տալու մասին պարտավորեցնում ե մեզ ել ավելի ուշադրությունը կիրառել բերքատվության բարձրացման ազրուենարկումները»

Հողի բերքատվությունը բարձրացնելու գործում թիթեռնածագկավոր բույսերի մշակությունը բավականին մեծ աեղ ե բանում. ցանքաշրջանառության մեջ թիթեռնածագկավորները պատվավոր տեղ են զրավում, վորովհետև նրանք հողը «հանգըստացնում» և սննդանյութերով հարստացնում են և բարեկավում հողի ֆիզիկական վիճակը՝ ծակուակենությունը, ոդախափանցելիությունը, աերացիան ու հողի մեջ շատացնում բույսերի սննդառության համար անհրաժեշտ ազոտային սննդանյութերի պաշարը. Դրա համար ել թիթեռնածագկավոր բույս մշակած հողում, յերբ հետևյալ տարին ցորեն, բամբակ կամ այլ վոչթիթեռնածագկավոր բույս և մշակվում, բերքը խիստ բարձրանում են:

Գյուղատնտեսության մեջ թիթեռնածագկավոր բույսերի մշակության նշանակությունը նաև այն է, վոր այդ բույսերից սննդանյութերով հարուստ հատիկներ ու խոտ ենք ստանում, վոր մարդկանց ու կենդանիների սննդառության համար խոշոր նշանակություն ունեն:

Թիթեռնածագկավոր բույսերի վերոհիշյալ հատկությունները մարդկանց շատ գաղուց են հայտնի յեղել, ուստի և նրանց մշակմանը միշտ մեծ աեղ ե արվել:

Բայց ի՞նչ գաղտնիք ե այդ, ինչու միայն թիթեռնածագկավոր բույսերին ե վերապահված հողը սննդանյութերով հարստացնելու հատկությունը, ինչու մյուս բույսերն այդ հոտկությամբ չեն ոժտված—ի՞նչն ե պատճառը. Թիթեռնածագկավոր բույսերի սննդառության ժամանակ հողից այս կամ այն սնընդանյութերը վերցնելիս ի՞նչպիսի յուրահատուկ բիոլոգիական



11-281939

պրոցեսներ են կատարվում, վոր վոչ թիթեանածաղկավոր բռոյ-
սերի մոտ այդ համար թիթեաները բացակայում են: Դրա համար
ել, յերբ խոսք ե լինում թիթեանածաղկավոր բույսերի նշանա-
կոթյան մասին, անհրաժեշտ ե վերոհիշյալ հարցերը պարզա-
բանել, այսինքն՝ բացատրել: Թե թիթեանածաղկավոր բույսերու-
թերնց վեգետացիայի ընթացքում հողից ինչպիսի սննդանու-
թեր են ստանում, և այդ նյութերը հողում ինչպես են դաս-
գորված ու ինչ ձևով են արամադրվում բույսերին:

Թիթեանածաղկավոր բույսերի մշակության նշանակությու-
նը մեզ համար պարզ կլինի, յեթե նրանց սննդառությունն ու-
զերջինիս հետ կապված խնդիրներն ուսումնասիրենք:

ԲՈՒՅՍԵՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Վորպեսզի բույսերը սնվեն, այսինքն՝ աճեն, զարգանան ու-
րեք տան, անհրաժեշտ ե, վոր իրենց արամադրության տակ
բավարար քանակությամբ սննդանություն, զերմուրյուն, ոդ յեկ խո-
նավուրյուն ունենան: Մեզնում առաջին յերեք գործնը բույսերը
միշտ բավարար չափով գտնում են, բացի ջրից, վոր նույնպես
կարելի յե բավարար չափով տալ: Մեզ համար, բույսերը սնե-
ցու տեսակետից, կարեռն առաջին գործոնն ե՝ սննդա-
նյուրը, վոր զլխավորապես բաղկացած ե քիմիական 12 ելե-
մենտից, որինակ՝ ածխածնից, թթվածնից, ջրածնից, աղոտից,
ֆոսֆորից, ծծմբից, կալիումից, յերկաթից, մագ-
նեզիումից, մանգանից և այլն:

Վերոհիշյալ ելեմենտներց բույսերի համար ամենակարենք
նյութերն առաջին հինգ ելեմենտն են, վոր կենդանի՝ ապրող
նյութի—բույսերի և կենդանիների բջիջի պրատուղագմայի կմախքն
են կաղմում:

Այս տեսակետից այդ նյութերը կոչվում են նաև որգանա-
ծին, վորովհետեւ կենդանի որգանական նյութերը կազմված են
այդ ելեմենտներից:

Եթե բույսերի արամադրության տակ որգանածին նյու-
թերից մեկն ու մեկը քիչ ե, բույսը լավ չի զարդանում ու բերք-
ել պակաս և լինում: Հետեւապես այս որգանածին ելեմենտները
բույսերի զարգացման ու բերքատվության համար զլխավոր գոր-
ծոն են հանդիսանում:

Բույսերն իրենց սննդառության ընթացքում այդ որդա-
նածին նյութերն իրենց կանաչ տերեների ու արժատուերի մի-
ջոցով, տարբեր ձևով, տարբեր էնդանակով, բնությունից են
ստանում:

Այդ նյութերն ել բնության մեջ տարբեր ձևով, զանազան
միացությունների մեջ տարբեր կերպով են լինում:

Բույսի սննդառության համար որգանածին ելեմենտը, ոգու-
ակար նյութը, ամեն մի քիմիական միացության մեջ գտնված
էնդունելի չե: Բույսը պահանջում ե, վոր այդ որգանածին
հիմքնեար մի այնպիսի միացություն ունենա, վոր իր սննդա-
ռության համար ընդունելի, ոգտակար լինի: Այս տեսակետից
բույսը բավականին գժվարությունների յե հանդիպում, վորով-
հետեւ բույսերը շատ անգամ այդ որգանածին նյութերը վորոց
հարաբերությամբ չեն կարողանում գտնել ծանոթ ու ցանկալի
միացության մեջ: Այդ հարաբերությունը կամ շատ և լինում,
կամ քիչ նյութերն որգանածին ելեմենտների թե շատ և թե քիչ
լինելու զեպքում իրենց շատ զատ են զգում, հետեւապես նաև
շատ բերք տալիս: Ուրիշն՝ որգանածին և ընդհանրապես բույ-
սերի սննդառության համար բույսը ելեմենտներն այս կամ այն
միացության մեջ պետք ե լինեն այնպիսի հարաբերությամբ,
վոր բույսին մատչելի լինեն: Որինակ՝ ոդի մեջ հսկայական քա-
նակությամբ ազոտ կա, վոր, վորպես իներտ գազ, կազմում ե
ոդի մատ 80 տոկոսը: Ազոտն իր այդ վիճակում բույսի սննդա-
ռության համար, վորպես անմիջական աղբյուր, միանգամայն
ալպետք ե:

Վորպեսզի բույսերի սննդառության համար ազոտն ոգտա-
կար ու մատչելի լինի, նրա այդ ելեմենտար, իներտ գազային
վիճակը պետք ե փոխվի այլ վիճակի, այսինքն՝ պետք ե ոքսի-
դանա, միանա ազոտը թթվածնի հետ: Բնության մեջ այդ
ոքսիդացումը հսկայական ուժեղ եներգիայի ազգեցության տակ
և կատարվում: Այդ միացումը ընական պայմաններում կատար-
վում ե ամպամած յեղանակին, յերբ ելեկտրական կայծ և առաջ
դալիս (կայծակի ժամանակ), վորի հետեւանքով ազոտը միանում
և թթվածնի հետ և անձրւների կաթիլների մեջ ուժվելով՝ թափ-
վում յերկրի վրա ու հողի մեջ ծծվելով նիտրատներ և տալիս:
Այդ նիտրատները ջրի մեջ լուծվում ու բույսերի արմատների
միջոցով ջրի հետ բարձրանում են բույսի զանազան մասերը և
կազմում բջջի բաղկացուցիչ մասը:

ինչպես տեսանք, վորեև սննդանյութ, յեթե բնության մեջ. այս կամ միացությամբ գոյություն ունի, բույսերի համար մատչելի և ոգտակար լինելու համար, այդ միացության մեջ յեղած, այս գեպքում ազոտը՝ ելեմենտն ոգտակար լինելու համար, մի շարք փոփոխություններ պետք ե կրի:

Սակայն, ինչպես ազոտի նկատմամբ տեսանք, այդ փոփոխությունները հեշտությամբ չեն կատարվում, պահանջվում է ուժեղ եներգիա, վոր բնության մեջ շատ քիչ ե պատահում, իսկ մեր Արարատյան գոշտի պայմաններում, վորտեղ մթնոլորտային տեղումներ շատ քիչ են լինում, և յերբեմն ել այդ եներգիայի ազդեցությամբ ոքսիգացում բոլորովին տեղի չի ունենում, ավելի ևս քիչ ե պատահում. Ըստ Հանրապետ ելեկտրական կայձի ազդեցության տակ ոքսիգացած ազոտը շատ չնշին ե: Գիտնականները հաշվել են, վոր տարեկան մեկ հեծոտար հողին այդ ճանապարհով տրվում ե 1,8—4 կգ ազոտ: Ի՞սարկե՛ բույսերի սնվելու, դարպանալու և բերք տվյալ համար այդքանը շատ քիչ ե: Ազատ ազոտը հողի հետ կապելու (բույսերի համար ժամշերի դարձնելու) այլ յեղանակներ ու միջոցներ կան, վորոնք ավելի հեշտ են, եժան և ձեռնուու. այդ մասին, սակայն, հետո, իսկ այժմ անցնենք որգանածին ելեմենտներին՝ առանձին առանձին և բացատրենք, թե այդ նյութերն ինչ ձևով են գտնվում բնության մեջ, նրանց տարածականությունը և ույն, թե բույսերն այդ նյութերը վորպես սննդանյութ ինչպես են ընդունում:

ՈՐԴԱՆԱԾԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ածխածինը. — Ածխածինը բույսի համար ամենակարևո սննդանյութերից ե և կազմում է կենդանի նյութի մեծ տոկոսը: Նռանց ածխածնի որգանիզմ պատկերացնել չի կարելի: Ածխածին բնության մեջ մեծ քանակությամբ կա և հանդիսանում ե թե որգանական և թե անորգանական աշխարհի գլխավոր ելեմենտը: Ածխածին կա նաև ողում՝ գաղային վիճակում, իբրև ածխաթթու:

Բույսերն ածխածինը վերցնում են ողից՝ ածխաթթվի միացությունից, իսկ ածխածնի այլ միացություններից բույսերն ածխածնի վերցնելու ընդունակ չեն: Վորպեսզի բույսերն ածխածնի այլ միացություններից կարողանան ածխածին վերցնել, պետք ե այդ ածխածնի բարդ միացություններից քայլային վիճակում. իբրև

վեն և հասնեն ածխաթթվային վիճակի: Գալքայման այս ձեր բնություն մեջ միշտ գոյություն ունի:

Ենթե ածխաթթվի շրջանառությունն ուսումնասիրելու լինենք, կտեսնենք, վոր զանազան ճանապարհներով ածխաթթու յետ առաջանում: Մեծ քանակությամբ ածխաթթու յետ առաջանում կենդանական և բուսական աշխարհի չնչառության ժամանակակից կենդանիների:

Գործարանային արդյունաբերության մեջ զանազան վառելանյութեր գործածելիս նույնպես հսկայական քանակությամբ ածխաթթու գաղ և առաջանում: Ծրի մեծ տոկոսն ածխաթթու գաղն ե: Ածխաթթու գաղն առաջանում և նաև հրաբուկիներից: Վորոշ քանակությամբ ածխաթթու գաղ առաջանում ե բույսերի չնչառության ընթացքում և, վերջապես, հսկայական քանակությամբ ածխաթթու գաղ առաջանում և մեռած որգանական նյութերի հայտապետություն: այս քայլայումը կատարվում ե մանր, սովորական աչքով անտեսանելի եյակների — բակտերիաների սիջոցով:

Բակտերիաներն են, վոր կենդանական ու բուսական մեռած դիակները, անպիտք թափված որգանական զանազան բարդ նյութերը քայլայում, գարձնում են անորգանական պիգմենտներ: Ենթե այդ բակտերիաները, խոշորացուցային այդ որգանիզմները չինեյին, թե կենդանական և թե բուսական աշխարհի մեռած նյութերը չինեյին քայլայիլի, և միաժամանակից հետո յերկրագունդը կծածկվեր մեռած կենդանիների դիակներով ու բուսական մեռած որգանիզմներով, վորից հետո ապրող կենդանիներն ու բույսերն այլս ապրելու, իրենց կյանքը շարունակելու հնարավորություն չինեյին ունենաւ և ընդհանրապես յերկրագունդի վրա կյանքը կանգ կառներ: Բայց, իհարկե, այդ բանը տեղի չի ունենում, վորովհետեւ բնության մեջ անհաշիվ, հսկայական քանակությամբ բակտերիաներ կան: Դրանցով վի յեն ողը, ջուրը, հողը և հենց իրենք՝ որգանիզմները, բակտերիաները հրաշալի կերպով կատարում են իրենց պարտականությունը: Նրանք որգանական նյութերի քայլայումը հասցնում են մինչև վերջ, դարձելով նրանց անորգանական նյութեր:

Անհրաժեշտ ե ուզագրություն դարձնել այն հանգամանքի վրա, վոր ածխաթթու առաջանալու միջոցներից ամենակարենը բույսերի սննդառության համար որգանական նյութերի քայլայումից առաջացած ածխաթթու գաղն ե, մանավանդ, վոր հողի

մեջ այդ քայլքայումը տեղի յե ունենում, և բույսերն ավելի հեշտությամբ են յուրացնում այնտեղ մեռած որդանական նյութերի քայլքայումից առաջացած ածխաթթու գաղը, քան հողից գուրս՝ ողում առաջացածը: Այս տնսակեսից հսկայական նշանակություն ունի հողը մեռած որդանական նյութերով հարըտացնելը: Մի կողմից՝ այդ նյութերի քայլքայումից առաջանում են մեծ քանակությամբ ածխաթթու գաղ, իսկ մյուս կողմից հողը հարստանում ե այլ սննդատու նյութերով, վոր բույսի համար նույնպես անհրաժեշտ են:

Նկատված ե, վոր այն հողերն են շատ բերք տալիս, վորոնք մեծ քանակությամբ մեռած որդանական նյութեր են պարունակում, իսկ այն հողերը, վոր մեռած որդանական նյութեր քիչ են պարունակում, քիչ բերք են տալիս Զանազան ճանապարհներով այս կամ այն բարդ նյութերի քայլքայումից առաջացած և մինույն ժամանակ ողի մեջ յեղած ածխաթթվի քանակը հազիվ ե կազմում ողի 0,03% ը:

Բույսերն իրենց կանաչ տերևների մեջ գտնվող քլորոֆիլային հատիկների ոգնությամբ, արևի ճառագույթները եներգիայի ուժի շնորհիվ ածխաթթու գաղ ողից են վերցնում: Ածխաթթու գաղը միանալով արմատների սիջոցով բարձրացող ջրի հետ՝ տալիս ե ուտա, ապա վեր ե ածվում շաքարի ու միանալով ազոտային նյութերի հետ՝ կազմում ե սպիտակուց—կենդանի նյութ:

Բույսերն իրենց ամբողջ վեգետացիայի ընթացքում (ծլեռուց կամ աչքերը բացվելուց մինչև բերքի վերջը—տերևները թափվելը) ածխաթթվի պակաս շատ հաճախ են զգում: Բույսի համար, վօրպես կարեվոր գործոն, նողերը յերեմն արեսական հանապահով պարագանում են ածխաթթվով և այդ գործոնի պակասը լրացնում:

2. Թրվածին յեկ ջրածին:—Թթվածինն ել ածխաջրածնի պես կարեու մի ելեմենտ ե: Բույսերը թթվածինը վերցնում են ջրից, իսկ շնչառության համար ողի մեջ յեղած ապատ թթվածինն են սպագործում:

Չուրը բույրը մարմինների մեծ տոկոսն ե կազմում, հսկայական քանակությամբ գտնվում ե յերկրագնդի վրա՝ կազմելով դետեր, լճեր, ծովեր և ովկիանոսներ:

Մնացած ելեմենտները, վոր անհրաժեշտ են բույսերի սննդառության համար, բույսերը վերցնում են հողից հանքային

նյութերի ձեռք, վորոնք ջրի մեջ լուծվում և արմատների միջացակ ջրի հետ բարձրանում են բույսերի վերին մասերը: Հողեր կան, վոր հանքային նյութերից աղքատ են, այդ հողերում բույսերը լավ չեն աճում և վատ բերք են տալիս բույսերը հատկապես վատ բերք են տալիս Փոսֆորի, կալիումի և կալցիումի բացակայության գեպքում, վորոնց պակասը լրացնելու համար հողերն այդ նյութերով պարարտացնում են:

Թիթեանածաղկավոր բույսերի մշակության նշանակությունը պարզելիս կարեու ե ազտի, վորպես զլիավոր Փակտորի, խոնիրը պարզելի խոսելով նաև ազտի հետ կապված մի շարք հարցերի մասին, վոր մենք մարմատանորեն կպարզաբանենք ներքեւում, վորովհետեւ թիթեանածաղկավոր բույսերի նշանակությունը, վերջիվերջո, ազտի, վորպես մարդկանց, կենդանիների և բույսերի սննդառության համար կարեու նյութի, գերը պարզաբանելն ու հողն ազտով հարստացնելն ե:

3. Ազտ:—Ազտոն իր մի քանի կարեու հատկություններվ վազուց հայտնի յե մարդկությանը՝ չունեում, չունաստանում և արեելյան յերկներում ազտի զանազան միացություններից զանազան զույնի ներկեր եյին պատրաստում: Միջին զարդում ազտի միացություններից արդեն վառող եյին պատրաստում, բայց մինչև 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի սկիզբն ազտի դերն ու նշանակությունը բուսական և կենդանական աշխարհի համար պարզված չեր:

Ազտի կենսաբանական նշանակությունը պարզելու համար միայն այդ շրջանում են սկսում նրա ուսումնասիրությունը:

Ազտը մեծ քանակությամբ գտնվում ե բնության մեջ, գտնվում ե թե որդանական և թե անորդանական նյութերի մեջ, ինչպես և ազտ վիճակում ողի մեջ: Ազտի հանքային միացություններից հայտնի յեն Զիլիի և Պերուի (Հարավային Ամերիկա) սելիտրաները, վոր հսկայական տարածություններ են բռնում: Այժմ այդ հանքերը շահագործվում են, մեծ քանակությամբ սելիտրա յե արտահանվում այլ յերկրներ և ոգտագործվում ազտից աղքատ հողերը հարստացնելու համար: Ազտը, վորպես նիտրատ, հողի մեջ ել ե զտնվում և բույսերի համար անմիջական աղբյուր ե հանդիսանում: Բայց հողի մեջ ազտ քիչ կա, մանավանդ, վոր յեղած նիտրատները ջրի մեջ լուծվելով մի մասը բռնյան են վերցնում վորպես սննդանյութ, մի մասն ել ջրի հետ անցնում ե հողի ներքին շերտերը, ուր բռնյա-

արմատները չեն հասնում, և այսպիսով միանգամայն անպետք դառնում բռւյսի համար

Հանքերից ստացված ազոտը, իբրև սելիտրա, արևեստական կերպով տալիս են հողին՝ ազոտի պակասը լրացնելու համար Մեռած որգանական նյութերի մեջ յեղած ազոտը բռւյսի համար պետքական ե դառնում միայն այն ժամանակ, յերբ որգանական նյութերը քայլայվում և ամռնիսկ ե առաջանում, վորը վորոշ հայտնի բակտերիաների ոգնությամբ դառնում ե ազոտային, ապա ազոտական թթու, հետո այդ թթուն հողի մեջ միանալով կալիում և նատրիում հետ, տալիս ե նիտրատները Հողի մեջ կատարվող այս յերեսութք կոչվում ե Եթերիֆիլոցիտ. Ընդհանրապես նիտրիֆիկացիոն ճանապարհով մեռած որգանական նյութերի քայլայումից առաջացած, բռւյսերի համար ընդունելի ազոտի ալրյուրը շատ փոքր ե. Ազոտը բռւյսերին ոգտակար գործներու համար մի շարք ուրիշ աղբյուրներ կան, վոր ավելի կարենու են և մանրամասն ուսումնասիրության արժանի.

Առաջին անգամ այս խնդիրն ուշադրության ե արժանանում այն ժամանակ, յերբ գերմանացի գիտնական, հայտնի Փիդիկոս Յուսուս Լիբիդը 1840 թվականին առաջադրում ե բռւյսերի սննդագության թեորիան, վոր հետագայում հսկայական նշանակություն ունեցած սացիոնալ գյուղատնտեսության համար. Նա տառաջինն եր, վոր վերջնականապես պարզեց բռւյսերի սննդագության հարցը. Լիբիդին եր, վոր գտավ բռւյսերի սննդառության համար անհրաժեշտ քիմիական 12 ելեմներ, նա գրել ե «Քիմիան և նրա կիրառումը ֆիզիոգիֆիայի և գյուղատնտեսության մեջ աշխատությունը, վոր գիտական աշխարհում մեծ հետաքրքրություն առաջացրեց. Լիբիդի առաջարրած խնդիրներն իրենց վրա կենտրոնացրին գիտնականների ու գյուղատնտեսների ուշադրությունը, Հետագայում բռւյսերի սննդառության վերաբերյալ նա մի շարք այլ աշխատություններ հրատարակեց, վորոնցով պարզում եր, թե բռւյսերն իրենց կյանքը շարունակելու, աճելու, զարգանալու և բերք տալու համար ինչպիսի նյութեր են պահանջում, ինչ քանակությամբ, ինչ ձևով, և այլն. Հատկապես ազոտի վերաբերմամբ կատարած ուսումնասիրությունները վերջիվերջո պարզեցին, թե բռւյսերն այդ նյութն ինչպիսի վիճակում են ստանում և վնասեղից.

Յերկար տարիների փորձը ցույց է տվել վոր բռւյսերն իրենց սննդառության ընթացքում շարունակ նվազագույն չա-

փով են ազոտ գտնում, և գիտնականներն աշխատել են ազոտի այդ պակասն ուրիշ հողին արհեստական կամ բնական ձևով ազոտ տալու ճանապարհով լրացնելը

Բանն այն ե, վոր բոլոր տիպի բռւյսերն ել ազոտով սնվելու տեսակետից միմյանցից տարրերվում են բռւյսեր կան, վոր իրենց մի շարք հատկությունների շնորհիվ կարողանում են ազոտն ոգտագործել բռւյսեր ել կան, վոր այդ հատկությունները չունեն և ողի ազոտն ոգտագործել չեն կարողանում. Մնացած որգանական նյութերից բոլոր տիպի բռւյսերը համարյա միատեսակ ձևով են սնվում:

Ազոտով մնվող բռւյսերը բաժանվում են յերկու մասի կամ յերկու խմբի.

1-ին. բույսեր, վոր ողի ազոտն ոգտագործելու ընդունակությունը ունեն.

2-րդ. բռւյսեր, վոր ողի ազոտն ոգտագործելու ընդունակությունը չունեն*).

ԲՈՒՑՍԵՐ, ՎՈՐ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ ՈՒԻ ԱԶՈՏՆ ՈԴԱԳԴՈՐԾԵԼՈՒ

Այս խմբին են պատկանում թիթեռնածաղկավորների ընտառնիքին պատկանող բույր բռւյսերի թե միամյա և թե բազմամյա տեսակները. Մեզ համար վորպես մշակելի բռւյսեր կարեվոր են՝ մաշը, վիկը, սոյան, լորին, ապույտը, յերեխնուկը, կորնգանը, քրուզնան, սիսեռը, վուպը, լյուափինը և այլն.

Վերոհիշյալ թիթեռնածաղկավորներից մի քանի տեսակների մշակությունը շատ վաղուց հայտնի յեր հույսներին և հումեյացիներին վազ միայն այդ բռւյսերից մի քանիսի տված ու սննդագության հարուստ նյութեր, ինչպես, որինակ, սպիտակուց պարունակող հատիկներից վարպես սննդագությունը համար, այլք վորպես հողը սննդանյութերով հարտաշնորդ բռւյսեր. Որինակ՝ հումեյացի հին գրող Պիլիսոսը խորհուրդ ե տալիս ցորնի ցանքը կատարել Մուապինից կամ վիկից հետո, վորովհետեւ այդ բռւյսերից հետո հողը լավանում, ուժեղանում ե. Նույն ցուցանմերին ենք հանդիպում նաև կատոնի, կոլումբիի և այլոց գրվածքներում.

Այստեղից պարզ ե, թե Հունաստանում ու Հռոմում վոր քան մեծ նշանակություն են տվել թիթեռնածաղկավոր բռւյսեր

* Այս խմբին պատկանող բռւյսերի մասին մենք այստեղ չենք խուսելու

մշակությանը՝ հողի բերքատվությունը բարձրացնելու համար թիթեռնածաղկավոր բույսերի մշակությունը հայտնի յեր նաև Չընաստանի, Հնդկաստանի և Ճապոնիայի ժողովուրդներին նրանք իրենց ցանքազրջանառությունն այնպես եյին դասավարում, վոր թիթեռնածաղկավոր բույսից հետո միշտ հացահատիկ եր գալիս Բացի այդ, նրանք կանանչ պարարտացման համար թիթեռնածաղկավոր բույսեր եյին մշակում: Մինչև 20-րդ դարն այս կարծիքն եր տիրում, թե թիթեռնածաղկավորները հողն ուժեղացնում են, բայց վոչ վոք չեր կարողանում բացատրել, թե պատճառն ինչ եւ

1881 թ. կերմանացի պրակտիկ գյուղատնտես Շուլցե-Լյուտիցն իր կարգածքում միննույն հողամասը 15 տարի շարունակ մշակեց, տալով միննույն քսնակի կայինիտ (պարարտանյութ), վերջին տարին այդ հողամասը լուսպին ցանեց վեգետացիայի շրջանում ստացած լուսպինի մեջ տպուի քանակն ավելի շատ եր. քան նախորդ տարիները նույն հողամասում ցանած հացաբույսի մեջ: Այս յերեսոյթը նրա համար անհասկանալի յեր. Այդ մինչպիս եր, վոր լուսպինի ազուրը շատ եր, վմբարելից եր նա ստացել այդ ավելորդ ազուրը և բնչու հացաբույսը նույնը չեր կարողացել կատարել: Այս յերեսոյթը բացատրելու համար նա դիմեց այն ժամանակվա գիտնականներին: Այս հանգամանքը գիտնականներին առիթ տվեց նորից զբաղվել թիթեռնածաղկավորների մշակության նշանակությունն ու դերը պարզեց խնդրով:

1888 թվին, շնորհիվ գերմանացի գիտնական տդրիկուլուուր քիմիկոս Հելլրիգի և նրա աշակերտ Վիթարդիսի անխոնջ աշխատանքների, այդ խնդիրը վերջնականապես լուծվեց: Վերսիցյալ գիտնականները պարզեցին, վոր թիթեռնածաղկավոր բույսերի այս հատկության պատճառը նրանց արմատների վրա յեղող պարարիկների մեջ (նկ. 1) ապրող բակտերիաներն են: Յերե սիլի հողի մեջ այդ բակտերիոներից չինելին, թիթեռնածաղկավորների արմատների վա պալարիկներ չելին առաջանա յել երան ազատ սնվելու ընդունակ չելին լինի, հետևիապես հողը լավացնելու հատկություն ել չելին ունենա:

Հելլրիգել և Վիթարդուն իրենց գիտողություններից յեղուակացնելով՝ ասում են. «Թիթեռնածաղկավոր բույսերը կարող են սնվել ողի՝ մինուրատի ազուրով միայն այն գեպքում, յեթե բույսը

տակ հողն ստերիլ*): չե, այսինքն՝ յերբ հողը պալարաբակտերիաներ ե պարունակում: Այդ բակտերիաներից զուրկ ստերիլ հողը ուներում նույնպիս կարող են ազուրով մնվել, յեթե այդ ստերիլ հողը պատվաստենք, այդ հողը վարակենք այն հողերի լուծույթով: վարունց մեջ առյալ թիթեռնածաղկավոր բույսերը կարողանում են ոդի ազուրով մնվել. այսինքն՝ նրանց արմատների վրա պալարիկներ են առաջանում:


Նույն տարին բակտերեղուգ Բայերինկին հաջողվում ե թիթեռնածաղկավոր բույսերի արմատների վրա յեղած պալարիկներից ստանալ բակտերիաների մաքուր կուլտուրաներ**): մեկուսացնելով նրանց: Այս աշխատությունից հետո վերջնականապես պարզվեց թիթեռնածաղկավոր բույսերի՝ ողի ազուրը կապելու ընդունակությունը, վորի պատճառը՝ ինչպիս ասացինք, նրանց արմատների վրա գտնված պալարիկների մեջ ապրող բոկտերաներն են:

Այս բակտերիաները բույսի արմատների մեջ ապրելով՝ նրա բջջի ածխաջրատներով՝ զաքարներով են սնվում, այդ շաքարների քայլայումից առաջած եներգիայի շնորհիվ ողի ազուրը կապում և իրենց մարմին սպիտակուցային նյութը պատրաստում: Այս գործողությունը կռչվում է ազուրի անմիջացիա, Այս ասիմիլացիան այսպիս ե կատարվում, ինչպիս արևի եներբեկայի շնորհիվ կանաչ տերերի քլորոֆիլային հատիկներն ածխաթթու զազն ասիմիլացիայի յին յենթարկում:

Բակտերիայի կապած ազուրից ոգավելու վերաբերմամբ թիթեռնածաղկավոր բույսերի մասին մի քանի կարծիք կա: Առաջին և ավելի ճիշտն այն ե, վոր յերբ թիթեռնածաղկավոր բույսը ցանելու առաջանում ե հողի մեջ, վորտեղ պալարիկներ առաջացնող


*) Ստերիլ ե կոչվում, յերբ նյութը կոյ հողը բակտերիաներ չի պարունակում:

**) Տարբեր կուլտուրաներ են առաջանում, յերբ բակտերիաների առանձին տեսակներ մաքուր գծով զարգացնում են:



Նկ. 1. Վիթի արմատները պալարիկներով

բակտերիաներ կան, բույսն արմատներից այնպիսի նյութեր ե արտադրում, վոր պալարաբակտերիաներին արմատները դեպի իրենց են ձգում, այդ պալարաբակտերի սներն սկսում են բռյակ արմատների, հատկապես մազարմատների վրա հավաքվել և փրենց մարմնից առաջացրած տոքսինների (լուծիչ նյութեր) շնորհվ սկսում են արմատների թաղանթը լուծել և սնվել բջջի արտադրած որգանական նյութերով, հատկապես ածիաջրատներով, Բակտերիաներն այնտեղ սկսում են ոգտագործել բջջի շաքարային մասը, վորից և սկսվում ե բջջի գրդուկանությունը. բջիջը բակտերիաների կերպումից—գրգռականությունից սկսում ե այդ մասում ալելի շատ նյութեր արտադրել. բջիջը ձևափոխվում, բոլորովին այլ տեսք ե ստանում, ուռչում, այլանդակվում ե. Այս ձևը կոչվում ե հիպերտրոֆիայի յենթարկված ձև:



Նկ. 2. Արմատների բջիջների բակտերիաների բակտերիուլ վարակման թիւները
Նկ. 3. ա.—պալարաբակտերիաները հողի լարների հողի մեջ. բ.—լարների հողի մեջ.

Հիպերտրոֆիայի յենթարկված բջջից բակտերիաները կարող են անցնել կողքի բջիջներին այնքան, վոր, մի կողմից՝ բակտերիան այլես չանցնի ուրիշ բջիջների և, մուս կողմից՝ մի քանի իրար մոտիկ բջիջներում բռյալ նրանց հոսուն ընթացքը կատացնում ե, առաջացնելով այս կամ այն որգանական, նյութը, վորոնք բակտերիային ստիպում են այլես վերև չլարժելը. Հիպերտրոֆիայի յենթարկված բջիջներն են, վորույսի արմատի այդ մասում պալարի ձև են տալիս: Բակտերիաներն իրենց սննդառության ժամանակ, իրենց մարմնի մեջ ողի աղոտ կապելիս, ողի աղոտն ասիմիլիացիայի յենթարկելիս, լրի մեջ լուծվող լորձանման մի նյութ և առաջանում, վորի մի

մասը բակտերիաներն են վորպես սննդանդ ոգտագործում, իսկ մի ժամանակ ել բույսներն են իրենց բջիջների միջացով ծծում: Պետք ե ասել, վոր բակտերիաներն այդ որությամբ սկզբում կարճ ձևագիկի ձև են ունենում, իսկ հետո կամաց-կամաց իրենց ձեր փոխելով յերկար, հաստ ձողիկի ձև են ստանում, ապա ճյուղավորում: Այս ձևը կոչվում է լակտերիոիտ կամ աշխատող ձև: (Տե՛ս նկ. 3):

ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Բայերինկը, յերբ պալար առաջացնող բակտերիաները մեկնաւացրեց և առանձին-առանձին ուսումնասիրեց, անվանեց բակտերիում ուսդիցիկություն: Սրանք սպորներ չեն առաջացնում, դրա համար ել պատկանում են բակտերիաների խմբին նկատված ե, վոր ամսն մի թիթեանածաղկավոր բռյալ ունի յուր հատուկ բակտերիայի տեսակը, վոր մի ուրիշ թիթեանածաղկավոր բռյալ վրա չի կարող ապրել. որինակ՝ մաշի արմատի վրա գտնվող պալարաբակտերիան միայն մաշի վրա յեն զարգանում: Առ լար վրա զարգանալ չի կարող:

Նկատված ե նաև, վոր պալարաբակտերիաները հողի մեջ ուսպում են ազատ վիճակում, բայց աղոտ կապում են թե վոչ, վերջնականապես հայտնի չե. կարեորն այն ե, վոր թիթեանածաղկավոր բռյալ իրենց լավ են զգում, արագորեն զարգանում են, բազմանում և ողի աղոտն ել ավելի մեծ թափով՝ ինտենսիվությամբ կապում, վորից թե բռյալ և ոգտագում և թե հողն և հարստանում, և այսպիսով ապահովվում ե թիթեանածաղկավորներին հաջորդող հացարույսերի կամ վոչ թիթեանածաղկավոր այլ բռյաների բերքը:

Պալարաբակտերիաներն ապրելով թիթեանածաղկավոր բռյալի արմատների վրա՝ պալարներ են առաջացնում, յերեմի նույնական ընկույզի մեծությամբ: Այդ պալարիկները բազմացյա բռյալների վրա կարող են յերկար ապրել, իսկ միամյաների վրա՝ մինչև նրանց վեգետացիայի վերջը: Վեգետացիան վերջանալուց և բերքը հավաքելուց հետո թիթեանածաղկավոր բռյաների արմատները մնում են հողի մեջ, նրա հետ մնում են նաև մեծ քանակությամբ պալարիկներ, այսինքն՝ բակտերիաների մեռած մարդիներ, վոր սպիտակուցային նյութեր են հանդիսանում: Սրանք են, վոր հողի մեջ քայլացիկ հետեւյալ տարբեն ցանցելիք հացարույսի համար սննդանյութ են զարում:

Հողի միկրոբի լոգիական հասկությունները ցույց են տվել վոր հողեր կան, վորոնք թե ազդուանյութերից հարուստ չեն, բայց պալար առաջացնող բակտերիաներ են պարունակում. այդ հողերում ցանված թիթեռնածաղկավոր բույսը շատ լավ է աճում, և, շնորհիվ արդ պալարներն առաջացնող բակտերիաների, լավ բերք ե տալիս. իսկ յեթե այդ հողերի մեջ պալարաբակտերիանութը բացակայում են, այն ժամանակ թիթեռնածաղկավոր բույսը վատ է աճում և քիչ է բերք տալիս. Այդ հողերը, յեթե ազդուային պարարտանյութերով արհեստականորեն պարաբացնենք, նրանց մեջ ցանվող բույսերը նորից նորմալ կերպով կաճեն ու բավարար բերք կստացվի:

Ցերկար ժամանակ ծեծվում եր այն հարցը, թե ինչպես անեն, վոր պալարաբակտերիաներ չպարունակող հողերն այդ բակտերիաներից ունենան, մանավանդ, վոր այդ հողերին արհեստական պարարտանյութեր տալը մեծ ծախսերի հետ և կազմած, իսկ այդպիսի հողերում պալարաբակտերիաներ ունենալուց հետո պարարտացման հարցը փորոշ չափով կհեշտանա ու տնտեսությանը կազմատվի ահագին ծախսերից:

ՀՈՂԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ

Հողի պատվաստման գործը նոր և, 30—35 տարվա պատման հազիվ ունենա: Գյուղատնակության զարգացման զուգնթաց, մի կողմից՝ հողը նորանոր յեղանակներով մշակելու ձևերը զարգանում են, և, մյուս կողմից՝ հողը բարելավելու վրա գրված ներդրումները շատ ավելի քիչ են լինում, քան հողից ստացված արդյունքը, այսինքն՝ քիչ ծախսեր կատարելով մեծ ոգուտ և ստացվում — ահա ուսցիունալ գյուղատնակության նպատակը: Վորպեսզի տնտեսությունն այդ նպատակին հասնի, համաշխատ այն ազդացութը, վորտեղից շտու և ստանալու, անհրաժեշտ ե, վոր լավ ծանոթ լինի այդ ազդյուրին՝ հողին, ուսումնականի այնպես կա, պարզի թե հողն թնչ պահանջներ ունի, բիոֆիմիական թնչ պրոցեսներ են կատարվում նրա մեջ, և, համաձայն այդ բոլոր պայմանների, իր աշխատանքներն այնպիս դասավարք մնա թե ինքը շահվի և թե հողն ուժասպառ չլինի:

Զարգացած գյուղատնտեսություն ունեցող յերկրները միայն հողին տիրապետելով ե, վոր կարողացի և արագ կերպով պարզացնել գյուղատնտեսությունը և քիչ ծախսեր կատարելով

Հողը պատվաստելու նպատակն այն է, վոր անբերրի հողերը լավանան ու պտղաբեր դառնան: Բացի այդ, պատվաստման միջոցով հողագործն ազատվում է հողին անընդհատ պարաբանյութեր տալուց:

Գյունականներն սկսեցին պատվաստման ձեերն ու մեթոդներն ուսումնասիրել վորպեսզի պատվաստումը զբական արդյունք տա: Առաջին անգամ պատվաստումը կատարեցին բնական հողով, այսինքն՝ այնպիսի հողով, վորի մեջ պալարաբակտերիաներ կային, և վատ, անբերրի հողերի մեջ ցանվելիք թիթեռնածաղկավոր բույսը պատվաստացու հողերում պալարիկներ եր առաջացնում: Պատվաստելու գլխավոր նպատակն այն է, վոր պալարաբակտերիաներ չպարունակող հողին այդ բակտերիաներից տրվեն, վորպեսզի թիթեռնածաղկավոր բույս ցանելուց հետո արմատների վրա պալարիկներ պառաջանան:

Առաջին անգամ պատվաստելու փորձը կատարվել և Գերմանիայում շատ փոքր տարածության վրա:

Ինչպես վերն ասացինք, լավ հողը վերցնում ցանում են պալարաբակտերիաներից զուրկ ու վատ հողի մեջ, ապա վարակված հողի մեջ թիթեռնածաղկավոր բույս են ցանում: Իսկ զաշտի մի մասն ել թողնում են առանց վարակելու — պատվաստելու, վոր այդ փորձից պարզվի, թե պալարաբակտերիաները կողն ազդուային նյութերով հարստացնում են, թե վաչ: Այդ փորձի կողքին նաև հանքային ազդուային նյութերի փորձ են գնում: Այսպիսով, ուրեմն, մի հողամաս, վոր բաժանված և յերեք մասի, վորի ա) մասը պալարաբակտերիաներով վարակված ե, բ) մասը վարակված չի և ազդուային պարարտանյութերով պարաբացված չի, գ) հանքային ազդուային նյութերով պարարտացված ե: Վեգետացիայի ընթացքում ու վերջում պարզվեց, վոր վարակված հողամասի և հանքային ազդուային պարարտանյութերով պարաբացը հողամասի բերքը լավ է, աճումը՝ փաթթամ, իսկ չպարաբացը ու չվարակած հողամասի բերքը շատ վատ է, աճումը՝ շատ թույլ և այդ յերեք հողամասի բերքն առանձին-առանձին հաջվի ասնելով պարզվեց, վոր ա և գ հողամասերի բերքն անհամեմատ ավելի շատ և քան չվարակված և պարաբացնյութեր չտված ը հողամասինը՝ միանից հետո զանազան

ԱԱԱԱ

յերկրներում, որինակ՝ Ամերիկայում, Անգլիայում, Շվեյցարիա-
յում և այլուր այդ փորձերի թիվը շատանում է; Բոլոր դեպ-
քերում ել հետևանքները դրական են յեղել: Կարեռն այն է,
վոր մի անգամ վարակված հողը յերկրորդ անգամ պատվաստելու
կարիք չի զգում:

Վորպեսզի խնդիրն ավելի պարզ լինի, բերենք Յելբուլա-
յում կատարած փորձերի արդյունքները:

Գյուղատնտեսական-գիտնական Ավգուստ Զալֆելդը փորձից
վատ հողը լավ հողով պատվաստել և դրանով ել վորոշել պալարա-
բակտերիաների գերը թիթեանածաղկավոր բույսերի բերքն ավե-
լացնելու և միևնույն ժամանակ հողը սննդանյութերով հարստաց-
նելու գործում: Նա վերցրեց իր փորձերի համար Հուստոնի
Կոլինքեներեցի և Հուանդացի Վիվերբրու՛ պալարաբակտերիաներ
պարունակող լավ հողերից և վարակեց պալարաբակտերիաներից
զորկ՝ վատ, անբերը կավային հողերը: Այնտեղ՝ առանձին-
առանձին և իրար հետ խառը թիթեանածաղկավոր բույսերի զա-
նազան տեսակներ ցանելով արդյունքը յեղավ այն, վոր բոլոր
գեղքերում ել պատվաստած կավային հողերը չպատվաստած հողի
համեմատությամբ լավ բերք տվին, մի հանգամանք, վոր պարզ
յերեւած և հետեւալ տախտակից:

Բույսեր	Հողի գրությունը	Միջին բերքը կգ-ներով	
		հատիկ	դարման և ծղ.
Դաշտային վոլոս	Հողն առանց պատվաստելու	7,975	23,175
» »	» Վիվերտի հողով պատ.	10,70	43,2
» »	» Կալենբետկերտի հողով պատվաստած	5,0	37,9
Կոնածե լոբին երփում Մոնդանում բույսի հետ խառնած	Հողն առանց պատվաստելու	2,85	19,5
»	» Վիվերտի հողով պատ.	8,8	35,05
Վայրի վոլոս	» առանց պատվաստելու	3,3	28,55
»	» Վիվերտի հողով պատ.	3,9	31,45
Կոնածե լոբին կալենբետ- կերեաի բյուսի հետ խառնած	» առանց պատվաստ.	6,2	14,65
	» Վիվերտի հողով պատ.	11,8	31,8
	» Կալենբետկ. » «	10,35	27,5

Այս աղյուսակից յերեսւմ ե, վոր Վիվերտի հողն ավելի լավ
ե ազդում քան Կալենբետկերտի հողը: Պատճառն այն է, վոր
վերջին հողը չէ պարունակել այն բույր պալարաբակտերիաների տե-
սակները և հատկապես վերոհիշյալ բույսերին հատուկ պալարա-
բակտերիաները, վորոնց մասին վերն արդեն խոսել ենք:

Նույն այդ գյուղատնտես Ավգուստ-Զալֆելդն էր կալվածքի
ճահճային հողերը պատվաստել և պալարաբակտերիաներ պարու-
նակող լավ հողով, ավելացնելով նաև վորոշ քանակությամբ ավագ:

Շատերը կարծում եին, թե պատվաստումը կամ վարակումը
վոչ թե պալարաբակտերիաների շնորհիվ ե արդյունք տալիս, այլ
հենց այդ պատվաստացու հողի մեջ գտնված աղոտային նյութերի
շնորհիվ: Ինարկե՝ այդ ձիւտ չե՞ քանի վոր հողին մենք շատ քիչ
քանակությամբ աղոտային նյութեր ենք ավելացնում: Առաջված
բերքի մեջ յեղած աղոտը շատ ավելի յե, քան մենք պատվաս-
տացու հողի հետ աղոտային պարաբառնյութ ենք տվել Բացի
այդ, նոր վարակված այդ հողից ամեն տարի լավ բերք և ստաց-
վում, քան չվարակված նույն տիպի հողերից,

Կելիրիգելն այս կարծիքները թյուր կարծիք եր համարում.
Նա ասում եր՝ «ամենատեյականն այն է, վոր պատվաստակալ հողը
հարստանում ե նոր բնակչությամբ՝ բակտերիաներով, վոր և գյու-
ղատնտեսության համար իրենց կատարած կարեռը գործունեյու-
թամբ բերքի բարձրացման գլխավոր պատճառ են հանդիսա-
նում . . .»:

Ավգուստ-Զալֆիլդալ ճահճային հողերը լավացնելու փորձերի
համար վերցրեց մի հողամաս ճահճային հողերից և բաժանեց
յերեք մասի. ա) մասի մեջ ցանեց թիթեանածաղկավոր բույս,
առանց ալդ հողամասը պատվաստելու և վերջինիս առանց վորեւ
աղոտային պարաբառնյութ տալու, բ) հողամասը պատվաստեց
պալարաբակտերիաներից հարուստ լավ հողով և ցանեց նույն
թիթեանածաղկավոր բույսը, իսկ գ) հողամասի մեջ ցանեց նույն
բույսը, առանց հողը վարակելու, միայն թե այդ հողամասն աղո-
տային պարաբառնյութով—սելիտը պարաբառացրեց: Արդյուն-
քը յեղավ այն, վոր ա) հողամասի բերքը շատ վատ եր, բ) հողա-

վորոնել, վոր պատվաստելու համար ավելի նպատակահարժեար լինեն և ծախսերն ել՝ ավելի քիչ:

Այդ գիտնականներին շատ կարծ ժամանակից հետո հաջողվեց հողը պալարաբակտերիաներով վարակելու այնպիսի նյութեր պատրաստել, վոր անհամեմատ ավելի լավ ելին, ձեռնուու և քիչ ծախս պահանջող, քան հողը հողով պատվաստելու յեղանակը. Այդ նյութերն են՝ նիտրագինը, ազոտոգինը, նիտրոկուլտուրը և պալարաբակտերիաներ պարունակող այլ բակտերիաք պրեպարատներ, վոր լաբորատորական յեղանակով են պատրաստվում. Պալարաբակտերիաներ պարունակող բակտերիալ այս պրեպարատներով հողը վարակելն այնուհետեւ տարածվեց Յեվրոպայի զանազան յերկրներում և Ամերիկայում. Յեվրոպայի համարյա բոլոր յերկրներում գյուղատնտեսական զանազան բակտերիոլոգիական լաբորատորիաներ սկսեցին վերոհիշյալ պրեպարատներից պատրաստել:

ՀՈԴԸ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ԲԱԿՏԵՐԻԱԼ ԳՐԵՊԱՐԱՏՆԵՐ

Հողի դրությունը	ճահճային հողին ավագ ավելացրած	ճահճային հողն առանց ավելացնելու
Առանց պատվաստելու	38,5 կ բերք մեկ հեկ.	39,0 կ բերք մեկ հեկ.
Պատվաստած հողով	117,0 կ » » »	111,0 կ » » »

Ինչպես վերոհիշյալ տախտակն ե ցույց տալիս, հողի պատվաստումը մեծ նշանակություն ունի չպատվաստած հողի համեմատությամբ. պատվաստած հողի բերքը յեռագատկվում է. Զնայած հողը հողով պատվաստելը մեծ արդյունքներ ե տալիս, բայց այս ձեռնով հողը վարակիլը, հողը պալարաբակտերիաներով հաբատացնելին իր պակասավոր կողմերն ունի, վոր այդ ձևու ընդհանրացնելու համար մեծ դժվարություններ են հարուցվում: Գիտնականները հաշվել են, վոր մի հեկտար հողը հողով պատվաստելու և այդ պատվաստից լավ արդյունք ստանալու համար հարկավոր ե այդ հողին 1—15 ամ խորությունից վերցրած 1220—4400 կգ լավ հող տալ. Այդ հողը վերցնելու տեղը խոր վարելն ու այդքան մեծ քանակությամբ հող տեղափոխելը մեծ ծախսեր են պահանջում, մանավանդ, վոր այդ աշխատանքը կատարվելու յե հողագործի շատ զբաղված լինելու ժամանակ:

Ինչպես տեսանք, այդ ձեռնով հողը պատվաստելը թեև մեծ արդյունք ե տալիս, բայց նրա վրա թափած աշխատանքը չափազնց շատ ե և, վոր զլիսավորն ե, այդ աշխատանքը զուգադիպում ե գյուղատնտեսության յեռուն աշխատանքների ժամանակին, յերբ բանվորական ձեռք դժվար է ճարվում, պայմաններ, վոր նաև մացնում են այդ ձեռնարկման եֆեկտը: Վերոհիշյալ բացերը վերցնելու համար գյուղատնտեսներն սկսեցին այնպիսի միջնորդը

1897 թվին Հեխստ քաղաքի (Գերմանիա) քիմիական գործարանում, Նոբելի յիվ Հիլտների առաջադրությամբ, առաջին անգամ պատրաստվում են պալարաբակտերիաների մաքուր կուլտուրաների պրեպարատներ՝ ֆելատինե սննդատու միջավայրում. այդ պրեպարատին արվում ե «նիտրագին» անունը: Նիտրագինը պարունակում ե ութ տեսակի պալարաբակտերիա, որինակ՝ յերեքնուուկի, առվույտի, վիկի, վոլոսի, լորու և թիթեռնածաղկավոր այլ բույսերի արմատների վրա ապրող ու պալար առաջնող բակտերիաներ: Պալարաբակտերիաներից զուրկ հողը պատվաստում են նիտրագին պրեպարատով և այն արդյունքն ե ստացվում, ինչ պալարաբակտերիաներ պարունակող հողով պատվաստելու: Բայց վորոց ժամանակից հետո նիտրագին պրեպարատն իր արժեքը կորցրեց. Նրանով պատվաստած հողերում թիթեռնածաղկավորների արմատների վրա վոչ մի պալար չառաջացավ: Հետազոտությունը պարզեց, վոր նիտրագին պրեպարատի մեջ պալար առաջնող բակտերիաներ բոլորովին չկան, վորովհետև գործարանում պրեպարատ պատվաստելու ժամանակ զգուշ չեն յեղել և կեղադատել են: Մնացած պալարաբակտերիաներն ել պալար առաջացնելու և ողի ազուոն ամիմիլացիայի յենթարկելու իրենց ընդունակությունը կորցրել են: Դրանից հետո նորեն և Հիլդները փոխեցին նիտրագին պատվաստելու ձևը և նիտրագինի գործունեյնությունն ավելի ուժեղացրին և 1903 թվին Բավարիայում (Գերմա-

նիւայ) հենց այդ հեղինակների զեկավարությամբ մասսայական փորձեր գրվեցին. գրված փորձերի 83% հաջող արդյունքներ տվեց:

Նիւարագինով կամ հողն են անմիջապես վարակում, կամ այդ հողում ցանվելիք թիթեռնածաղկավոր բույսի սերմերը, վարակվելու համար նիւարագին պրեպարատը, վոր ժելատինային հեղուկ ե, լցում են մաքուր և գունավոր շշերի մեջ (գունավոր շշերն արելի ճառագայթներից հեղուկը պաշտպանում են, վորովհետև յեթե հեղուկն արելի ճառագայթների տակ մնա, մեջը յեղած պալարաբակտերիաները ճառագայթների ազդեցությունից կլոտորվ են), ժելատինն այդ հեղուկը շատ պետք ե դնել զու մեջ: Տաքությունից ստացվում ե մածուցիկ հեղուկ. մածուցիկ այդ հեղուկը զրի մեջ լուծում և նրանով տամկում են ցանվելիք թիթեռնածաղկավոր բույսի սերմերը. զրից հանելով՝ հենց թացթաց ել ցանում են: Կամ թե այդ մածուցիկ հեղուկը խառնում են վորոշ քանակությամբ չոր հողի կամ ավազի հետ, ապա ցանում թիթեռնածաղկավոր բույս ցանվելիք հողի մեջ, վորից և անցնում ե թիթեռնածաղկավոր բույսի արմատներին: Բավարիայում կատարված մասսայական փորձերը, վորոնք բավականին խոչը արդյունքներ ելին տվել մեծ հետաքրքրություն առաջըին առաջազոր գյուղատնտեսական յերկրների գյուղատնտեսների ու գիտնականների մեջ: Շուտով զանազան յերկրներում, թե մասնավոր և թե պետական ձեռնակություններն սկսեցին իրենց լարորատորիաներում պատրաստել հողը պարաբացնող բակտերիալ պրեպարատներ: Հելուների ջնորհիվ բաց ե թողնում միայն Բավարիայի համար «Նիւրագին»: Գերմանիայում այդ ժամանակ Վյունն իր լարորատորիայում պատրաստեց հատուկ մի պրեպարատ «Նիւրագին» անունով: Ամերիկայում հատկապես այդ հարցով զբաղվել ե Մուրը՝ պարզելու այդ ձեփ պրեպարատ պատրաստելու տեսական ու գործնական նշանակությունը գյուղատնտեսության համար: Հետազայում, այդ աղբյուրների դրական արդյունքները պարզելուց հետո, Հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգների հողագործության դեպարտամենտը բաց թողեց «Նիւրակուլտ» պրեպարատը Անգլիայում այդ հարցով զբաղվել ե պրոֆ. Բաստոմլեյը և պատրաստել ե «Նիւրաբակեր» պրեպարատը. վերջապես, Գերմանիայում յերկու ֆիրմա սկսեցին պատրաստել շատ լավ պրեպարատներ՝ Սիմոնի «Ազոսօգին» անունով: Վորոշ ժամանակից հետո Ռուսաստանում նույնպես սկսեցին պատրաստել պրեպարատներ՝ «Նիւրագին» անունով:

Վերսէիցյալ պրեպարատների գործածությունը համարյանուն ե, ինչ վոր մեր նկարագրած «Նիւրագին» գործածելու ձեզ: Բոլոր տիպի պրեպարատներն ել տարբեր տեղերում և տարբեր ժամանակներում տվել են տարբեր արդյունքներ: Այս պրեպարատների մեջ կան շատ լավ ազգեցություն ունեցողներ (որինակ՝ Սիմոնի «Ազոսօգինը» և Հյուսիսային Ամերիկայի «Նիւրոկուլտուրը») և շատ վատ ազգեցություն ունեցող պրեպարատներ:

Համարյա բոլոր տիպի պրեպարատներն իրենց ծլունակությունը կորցնում են յերկար մնալուց հետո և լավ արդյունք չեն տալիս: Վերջերս արգեն սկսել են պատրաստել այնպիսի պրեպարատներ, վորոնք յերկար ժամանակ պահած են իրենց ուժը և ինտենսիվությունը: Այժմ մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ նույնպես պատրաստում են պալարաբակտերիաների մաքուր կուլտուրաներ՝ պալարաբակտերիաներից գուրկ մեր հողերը վարակելու համար: Այդ ուղղությամբ կատարված փորձերը միշտ դրական արդյունք են տվել: Հողերի պատրաստման այս յեղանակը կատարված մեջ թիթեռնածաղկավոր բույսի մեջ հողերը վարակելու հողը պատրաստելը նույնպես մեծ նշանակություն ունի, մանավանդ, վոր մեր գյուղատնտեսության մեջ թիթեռնածաղկավոր բույսերի մշակությունն արդեն անհրաժեշտություն ե դառնում: Մեզ մոտ կատարված փորձերը ցույց են տվել վոր մեզ մոտ կան այնպիսի շրջաններ, վորուել հողերի մեջ պալարաբակտերիաներ չեն պարունակվում:

Պարզ ե՝ այդ հողերում մշակվող բույսերի բերքը դրա չնորի պակաս կլինի: Այս հանգամանքը վերագրել այլ պայմանների, որինակ՝ ջրի, հողի և այլն, սխալ կլինի: Փորձերը ցույց են տվել վոր պատճառն այդ հողերում պալարաբակտերիաներ չլինելն ի միայն:

Ե. Միության մեջ հողի պատվաստումը, այսինքն՝ թիթեռնածաղկավոր բույսերի մշակության ժամանակ բույսերի սերմերը կամ հողը բակտերիաներով վարակելն որըստորե մեծ չափեր ե ընդունում: Մինչդեռ 1930 թվին միայն տասնյակ հեկտարների վրա յեր պատվաստումը կիրառվում, 35 թվի ընթացքում այդ հասել ե 40,000 հեկտարի և ավելի:

Ե. Հայաստանում պարաբացման կայանի հողը պատվաստելու փորձերը փայլուն արդյունքներ են տվել:

Փորձեր գրվել են առվույտի վրա՝ բամբակացան շրջաններում, կորնգանի և վիճի վրա՝ նախալեռնային և լեռնային շրջաններում: Թե հողի պատվաստումը կամ նիւրագին այդ բույսերի

բերքատվության վրա ինչպիսի ազդեցություն և թողել, ցույց է տալիս ներքոնիշյալ տղյուսակը:

Հ Խ	Տրամադր	Ք/ Բնակչութ	Բերքը ցենտներով				Ծանոթություն
			Կենացը հաղանակ	Ցուցաբեր- մանը	Չափութեա- նակը	Չափութեա- նակը	
1	Ն. Բայա- զետ-Մա- րուխան դուղ-	Վիկ	37,0	43,5	50,0	53,75	{ հողամասը ջրովի յե
2	Ն. Արտա		54,79	56,8	64,15	68,33	{ անջրդի, և հողամասը պարաբառագիւռ և գոմաղբով:
3	Հոկեմ- բերյան- Աբրու	առվույտ	20,77	26,69	29,55	27,68	Փանակի ամբողջ առվագ ընթացքում հակագիւռ բերքին և փերաբուժ:
			100	123,7	142,27	133,3	

Ինչպես տեսնում ենք, նիտրագինի ազդեցության տակ բերքը բոլոր դեպքերում ել խիստ բարձրանում ե, ավելի մեծ բերք ստացվել ե Ն. Բայազետի շրջանում: Առվույտի նկատմամբ պետք ե տսել վոր բերքն ընդհանրապես շատ ցածր ե. այդ ժամանակ բացատրել ժամանակին ջուր չտալու և, վոր կարեռն ե, թրթուրն այդ տարի խիստ ֆասելու հանդամանքով, նիտրագինի ազդեցությունը մեր հողերում շատ մեծ է փեկու ե տալիս, դրա համար ել 1936 թվականին Հայաստանում 10,000 հեկտար հող ե նիտրագինով պարաբառացվում:

Հարց կարող ե ծագել՝ արդյոք ավելի ձեռնուու չե հողին պարաբառանյութեր տալ և լավ բերք ստանալ քան հողը պալարաբակերիաների մաքուր կուլտուրաներով՝ բակտերիալ պրեպարատներով պատվաստել իհարկե՛ հնարագոր ե: Բայց կարեռն այն ե, թե գյուղատնտեսության համար այս յերկու ձեռնարկումներից փերն ե ավելի ձեռնուու և փերն ե ավելի եժան: Հարց ե առաջ գալիս՝ արդյոք կարմր ենք մենք միշտ և ամեն տարի թիթեանածաղկավոր բույսեր ցանվելիք հողը պարաբառացնել այդպիսի հնարագորություններ ունենք, կամ թե պարաբառանյութ գործածելը վնաքան ծախս ե պահանջում: Բոլոր տվյալները գալիս են ապացուցելու, վոր այդ հնարագորությունները չենք ունենա: Յեթե համեմատելու լինենք պարաբառանյութեր գործածելու ծախսերը բակտերիալ պրեպարատով վարակելու ծախսերի հետ, կտեսնենք, վոր վերջինս անհամեմատ ավելի եժան ե, քան

առաջինը և համարյա թե ծախս չի պաշաճաւմ, վոր գլխավորն ե, յերբ մի հոդամաս պալարաբակտերիաներով, վարակում ենք յերկրորդ անգամ վարակելու կարեք չի գումար, պայմանով միայն, վոր վանքաշրջանառությունից հետո նույն հոդամասում նորից թիթեանածաղկավոր բույս ցանվի և հողը կանոնավոր մշակվի, վորովհետև բակտերիաները ևս, ինչպես և բույսերը, հողի նկատմամբ վորով պահանջները ունեն:

Բայց այդ, այստեղ թիթեանածաղկավորների մշակության նշանակությունը միայն հողն աղոտացին սննդանյութերով հարըստացնելով չի սահմանափակված — նրանք հողի վրա այնպիսի աղեցություն են թողնում, վոր հետագա վոչ թիթեանածաղկավոր բույսերի համար մեծ նշանակություն ունի: Թիթեանածաղկավորների մեջ հողի ֆիզիկական դրության մեջ մեծ փոփոխություն ենք առաջացնում: Բույսերի արմատները, որինակ՝ առվույտի, շատ խոր են գնում ու ընդլայնական ճյուղավորությունները շատ խիստ տարածվում են, վորի չնորինիվ հողի մասսան վեր և ածվում ծակոտկենավորի և ողի հոսանքն ուժեղանում ե: Թե բույսի արմատների և թե ողի ածվաթթվի չնորինիվ, հողի մեջ շատանում են բույսերի համար հանքային նյութերը, բույսերի արմատների խիտ տարածվածվության չնորինիվ, հետագայում, առվույտը քաղելուց հետո, հողի մեջ մեծ քանակությամբ որգանական նյութեր են մնում, վոր նույնպես մեծ չափերով բարձրացնում են հետագա ցանվելիք բույսերի բերքատվությունը:

Բույսերի բերքատվության վրա խիստ կերպով ազդում են, ինչպես հայտնի յե, մոլախսոտերը, վերջիններս զարգանալով կուլտուրական բույսերի կողքին՝ սրանցից ավելի արագ են հողից սննդանյութերը վերցնում են և փարթամ աճելով՝ կուլտուրական բույսին հաճախ զրկում լույսից ու արեկից, խեղում նրան, զրահնեանքով ել մեղ համար կարենը բույսի բերքատվությունը խիստ պակասում ե: Իսկ թիթեանածաղկավոր բույսերի մշակմամբ մենք մոլախսոտերի գեմ պայքարում ենք, թիթեանածաղկավոր բույսերը մոլախսոտերի ամենավոխերիմ թշնամին են: Թիթեանածաղկավոր բույսերը վոչ միայն լավ ճյուղավորված, խոր, հողի ներքին շերտերը թափանցող արմատներ ունեն, այլև չափազանց լավ ճյուղավորված և վերերկրյա խիտ ցողունային սիստեմ ունեն: Իսկ այդ հատկությունների չնորինիվ հողի մեջ յեղած մոլախսոտերը լավ զարգանալ չեն կարողանում և խեղում են:

Այս կարևոր հատկությունների չնորինիվ ե, վոր թիթեանածաղկավոր բույսերի մշակությունը յերկրագործության մեջ մեծ

տեղ և գրավում և Թացած բույսերի՝ հացահատիկների և այլ բերքատվության բարձրացման գործում խոշոր նշանակություն ստանաւմ:

Թիթեանածազկավոր բույսերի մշակությունը խոչը դեր և խաղում նաև հողում վոչ պալարաբակտերիաների գործունեցությունն ինտեսիվ գարձնելու համար, հատկապես, հողում ազատ ազըռող և ազոտ կապող բակտերիաների գործունեյության համար, վորոնք նույնպես ողից մեծ քանակությամբ ազատ են կապում:

ՄԻ ԳԱՆԻ ԽՈՍՔ ՀՈՂՈՒՄ ԱԶԱՏ ԱՊՐՈՎ ՅԵՎ ԱԶՈՏ ԿԱՊՈՂ
ԲՈԿՏԵՐԻ ԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

90-ական թվականներին, յերբ պալարաբակտերիաների հարց վերջնականապես լուծվեց, պարզվեց նաև նրանց դերը գյուղատնտեսության մեջ: Մի խումբ գիտնականներ հետաքրքրվեցին, թե արդյոք պատճառն ինչ է, վոր տարիներ շարունակ գյուղացին իր հողից բերք և վերցնում վոչ թիթեանածազկավոր բույս մշակելով, որինակ՝ հացաբույս, վորի հետ և հողից վերցվում են հսկայական քանակությամբ ազոտ, վոր հողին համարյա թե չի վերադարձվում, կամ վերադարձվում են չնշին քանակությամբ: Հարց ե ծագում՝ ազատ այն հսկայական քանակությամբ ազոտը, վոր հողից վերցվում ե, նորից ինչ ճանապարհով և տրվում հողին:

Աշխատության սկզբում շեշտեցինք, վոր բոլոր բույսերի համար անհրաժեշտ աննդանյութերը բավարար քանակությամբ գտնվում են հողի մեջ, և բերքն այդ նյութերի պակասն այնքան շատ չի զգում, վորքան աղոտից, վորը հողի մեջ գտնվում ե շատ քիչ քանակությամբ, իսկ բույսի բերքը պայմանավորվում ե ազոտի քանակությամբ:

Ինչպես տեսանք, հողից հսկայական քանակությամբ ազոտ և վերցվում, բայց նորից բույրովին չի տրվում: Ուրիշն, բացի մեր դիտցած ազոտի աղբյուրներից, վորտեղից հողն աղոտային նյութեր և ստանում, կան նաև այլ աղբյուրներ, վոր գուցե ավելի կուռոր են քան այդ աղբյուրները: Գիտնականներն այնուհետև սկսեցին յեռանդում կերպով ուսումնասիրել հողի բակտերիոլոգիան և սրա հետ կապված՝ հողում կատարվող բիոքիմիական յերկույթները: Նրանք տարբեր յերկներում տարբեր տիպի հողերից մեկուսացրին զանազան բակտերիաներ, վորոնք հողին վորոշ քանակությամբ ազոտ են արամազրում:


1893 թվին Վինոգրավսկին Լենինգրադի հողերում մեկու-

սացրեց մի բակտերիֆա՝ Կլոստերիում Պասեերիանում, վորը հաղի մեջ տպրում և անայերոր — անթթվածնային պայմաններում, վորտեղ թթվածինը բացակայում է: Այդ բակտերիան ապրելով հողի մեջ՝ սնվում ե հողի ածխաջրատներով և խմորման ե յենթարկում որգանական նյութերը, հատկապես չաքարը, վորոնք քայլայման հետևանքով առաջացրած եներգիան ոգտագործում են ազատ ազոտը կապելու և մովելու համար:

Կլոստրիֆում Պաստերիանումը ձողիկների նման ե և դասվում է յուղաթթվային խմորման բակտերիաների շարքը, սպորներ և առաջացնում և շարժուն ե: Այդ բակտերիաների ներկայությունը հողում շատ կարևոր է, մանավանդ այնպիսի հողերում, վորոնք քիչ քանակությամբ ազոտ են պարունակում: Վերօհիզյալ բակտերիան գտնելուց 8 տարի հետո, բակտերիոլոգ Բայրինքը հողի մեջ զտալ նաև մի այլ բակտերիֆա, վոր այերոր պայմաններում ապրում ե հողի մեջ, այսինքն՝ այնպիսի պայմաններում, վորտեղ թթվածնի ներկայությունն անհրաժեշտ է: Այդ բակտերիան, վոր անվանեց Ազոտոբակտեր Խրոկիկովում, նույնպես վորոշ քանակությամբ ողի ազոտ ազոտ և կապում, բացառապես ոգտագործելով հողի ածխաջրային նյութերը: Գիտնականներն այնուհետև սկսեցին յեռանդում կերպով ուսումնասիրել հողի բակտերիոլոգիան և սրա հետ կապված՝ հողում կատարվող բիոքիմիական յերկույթները: Նրանք տարբեր յերկներում տարբեր տիպի հողերից մեկուսացրին զանազան բակտերիաներ, վորոնք հողին վորոշ քանակությամբ ազոտ են արամազրում:

Գրականության մեջ նկարագրված են այս կամ այն տիպին պատկանող շատ բակտերիաներ, վորոնք ողի ազոտն ասիմիլացիայի յեն յենթարկում: Բայց ամենակարևորները վերը նշված բակտերիաներն են: Վերջերս Գիրմանիայում պլուֆ: Լյոնիսի կատարած աշխատանքները պարզեցին, վոր ազոտ կապող բուրու այն բակտերիաները, վոր նկարագրել են զանազան բակտերիոլոգներ, ազոտաբակտերիայի տարբեր ձեերն են: Ազոտաբակտերին իր զարգացման ընթացքում իր ձեք փոխում է, նա կարսղ և դառնալ գնդածե, գնդածեկից՝ ձվածե, ապա ձողիկածե և այլն: Այդ բակտերիաները մեկուսացնելով և մանրամասն ուսումնասիրելով՝ անվանեց Բացիլուս ազոտոբակտեր, Բացիլուս ազոտոբակտերն իր գործունեյությամբ բոլոր տիպի ազոտ կապող բակտերիաներից ամենակարևորն է, մանավանդ, յերբ ապրում ե զանազան բակտերիաներից ամենակարևորն է ազոտ կապող միկրոբիոլոգիական յերկույթիները:

աղոտ և կապում: Այս տեսակետից ել Աղոտորակտերն իր գործունեյությամբ հանդիսանում են հողագործի ողնականը: Փորձերը ցույց են տվել, վոր յեթե մի հողում ազատ ապրող և աղոտ կապող բակտերիաներ կան, այդ հողին առանց պարարտանյութ



Նկ. 4 հօղի աղոտո-բակտերիաները
նույնպես գյուղացիները միենացարույսեր են ցանում, բայց միշտ ել միջին վորակի ու քանակի բերք են ստանում, նույնիսկ հողն առանց կանոնավոր մըշակելու: Մրա պատճառը հենց այդ բակտերիաներն են, վոր բույսին աղոտային նյութեր են տրամադրում: Մեր նախնական փորձերը ցույց են տվել, վոր մեր հողերում աղոտորակտերիաները բավականին մեծ թիվ են կազմում: Որինակ՝ մեկ գրամ հողի մեջ 5 միլիոնից մինչև 20 միլիոն բակտերիա կա: Այս թիվը կախված է տարվա յեղանակներից: Կարող են բարձրանալ և կարող են հակառակ տեղի ունենալ՝ իջնել նայած թե հողում աղոտորակտերիաների համար ինչպիսի պայմաններ են ստեղծվում, այսինքն՝ հողի մեջ բակտերիայի համար ողի, ջերմության, խոնավության և սննդանյութերի մնչ քանակություն և ինչպես են գտնվում: Չորությունից և հողի ուժեղ տաքանալուց բակտերիաների թիվը պակսում են, վորի հետևանքով ել աղոտի ասիմիլացիան դանդաղում ե: Բացի այդ, նրանց վրա ազդում են նաև ցուրտը, ինչպես և ողի ու խոնավության բացակայությունը:

Թե տարվա ընթացքում հողում ազատ ապրող և աղոտ կապող բակտերիաները հողային այս կամ այն պայմաններում վիրահան աղոտ են կապում, յերեսում և ստորև բերված տախտակից:

հեղինակներ	հողի բնույթը	մեկ հեկտար հողի մեջ մեկ տարվա ընթացքում կապված աղոտի քանակը կիլոգրամներով
Քյուն	—	58,2
Բերթելո	ավաղային	20,25
Հենրի	անտառային	10,20
,	կապային	32,0
Լյունիս	—	10,40
Բայերինկ	անտառային	25,0
Բ և մ ի	—	50,0 (բարձր տոկոս)
Դելեր և Վակներ	—	30,0
Հալի և Ելենբախ (Խոդամատեանի փոքր ձերից)	—	28,4—29,2

Այս տախտակից յերեսում են միջինը. մեկ հեկտարի վրա տարեկան կապված աղոտի քանակը կարելի յե ընդունել Յեկըռպական պայմաններում 30 կգ. այնպիսի մի քանակություն ե այս, վոր աղանդովում ե միջին բերքի ստացում, առանց պարարտացներու, իսկ մեզ մոտ այն կլինի ավելի բարձր, վորովիներ մեր հողերում անհամեմատ ավելի շատ աղոտ կապող բակտերիաներ են գտնվում, քան յեկըռպական հողային պայմաններում:

Փորձերը ցույց են տվել, վոր աղոտորակտերիաներն ավելի շատ աղոտ են կապում քան կլոստրիտիումը, շնորհիվ առաջինների ինտենսիվ գործունեյության, մանավանդ այն հողերում, վորտեղ այրոք պայմանները լավ են, հողը լավ մշակված ե ու մեծ քանակությամբ մեռած որգանական նյութեր ե պարունակում: Այդպիսի հողերում որգանական նյութերի քայլքայումն ուժեղ ե կատարվում:

Նկատված են նաև, վոր այն հողերն են ավելի շատ աղոտ կապում, վորոնք մեծ քանակությամբ մեռած որգանական նյութեր՝ ծղուա, արմատաների մասցըդներ, մեռած կենդանիների մարմիններ և այլ նյութեր են պարունակում: Որինակ՝ Ուեմին այդ ուղղությամբ փորձեր ե կատարել և նկատել ե, վոր մի գրամ հողը յեթե 0,8—0,9% հումուս — կիսաքայլքայված որդա-

նական նյութե պարունակում, ուրեմն՝ բակտերիաներն ողի ազոտը կապել են, ասիմիլացիայի յենթարկել 12,2 միլիգրամ, իսկ յեթե մի գրամ հողը 2--3% հումուս և պարունակել այն ժամանակ 38,6 միլիգրամ ազոտ և կլանվել:

Հումուսը, բացի վերոհիշյալ հատկությունից, ունի նաև այլ կարեւը հատկություններ, վոր, մի կողմից՝ նպաստում են հողի բակտերիաների ուժեղ զարգացմանը, իսկ մյուս կողմից՝ հողում այնպիսի միջավայր են ստեղծում, վոր բույսերն ավելի լավ են զարգանում: Հումուսը հողը դարձնում է փխրուն, հողի կառուցվածքը փխրում ե, ծանր կավային հողերը դարձնում ե թեթև կնձկային կտզմ ունեցող հողեր, վորով և հողի ջրունակությունը լավացնում ե և, վերջապես, հողին ջերմություն և տակա: Այս բոլորը մեծ նշանակություն ունի թե միկրոօրգանիզմների և թե բույսերի զարգացման համար:

Բացի վերը նկարագրած՝ ողում ազատ ապրող և ազոտ կապող բակտերիաներից, կան նաև հողում ազատ ապրող այլ բակտերիաներ ել, վոր բավականին մեծ քանակությամբ ազոտ են կապում: Այդ բակտերիաներից հայտնի յեն Ռադիո-բակտերի խմբին պատկանող բակտերիաները: Դրանք հետաքրքրական են նաև այն տեսակետից, վոր սերտ կապված են թիթեռնածաղկավոր բույսերի մշակության հետ: Եթե ասում ենք, թե թիթեռնածաղկավոր բույսերը հողն ազոտով հարստացնում են, ապա այդ հանգամանքը վորոշ չափով ել պիտի վերագրել այս բակտերիաների գործունեյությանը:

Մինչև վերջին տարիներս այս խնդիրը լրիվ պարզված չեր: 1916—1926 թվին Գերմանացի բակտերիոլոգ, վերջերս վախճանված պրոֆ. Լյոնինի Հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգներում 10 տարվա կատարած փորձերն ապացուցեցին, վոր Ռադիո-բակտերիաները հատկապես լավ են զարգանում թիթեռնածաղկավոր բույսեր ցանքած հողերում: Ռադիո-բակտերիաների թիթք ավելի մեծանում է թիթեռնածաղկավոր բույսի արմատների տակ անմիջականորեն գտնվող հողում, քան արմատներից հեռու գտնվածում, և թիթեռնածաղկավոր չցանքած հողում այդ թիթք ավելի պահանջանք է լինում: Այս յերեսույթը բացատրվում ենրանով, վոր թիթեռնածաղկավորներն իրենց զարգացման ընթացքում արմատներից այնպիսի որգանական նյութեր են արտադրում, վորոնք Ռադիո-բակտերիաների համար աննունդ են ծառայում: Չնայած Ռադիո-բակտերիաների ասիմիլացիոն ուժը շատ փոքր ե, բայց նրանց

քանակությունը հողի մեջ այնքան է դատ, վոր այդ բացը լրացվում և բակտերիաների քանակի տնչափ շատությունից, այստեղ բանակը փոխվում է վորակի:

Ռազի վակտերիաները մնվելով թիթեռնածաղկավոր բույսերի արմատներից արտադրված որգանական նյութերով՝ ողի ազոտն ասիմիլացիայի յեն յենթարկում իրենց մարմնի մասը կազմելու համար: Հարց է առաջ գալիս՝ ապա բույսերն այս ազոտ կապող բակտերիաների կապած ազոտով ինչպես են ոգտվում: Ինչպես տեսանք, պալարաբակտերիաների կապած ազոտը բույսերն ոգտածում են նրա առաջացրած լորձունքային մասից, իսկ մնացած մեծ մասը բա տերիան ինքն և ոգտագործում: Բանն այն է, վոր բույսը տիպի ազոտ կապող բակտերիաները հավիտենական կյանք չունեն: Նրանք ջուտ զարգանում և ջուտ ել մեռնում են, և նրանց դիակները մնում են հողում, վորոնք նախամոնիքիկացիոն, ապա նիտրիքիկացիոն ճանապարհով ձևափոխվելով՝ բույսին ազոտային նյութ են մատակարարում: Թե թիթեռնածաղկավոր և թե վոչ թիթեռնածաղկավոր բույսերի համար մեծ նշանակություն ունեն պալարաբակտերիաները և հողում ազատ ապրող ու ազոտ կապող բակտերիաները: Այդ բակտերիաները հողում ապրելով՝ տնտեսության ոգնական ուժն են հանդիսանում, բայց, գժրախտաբար, շատ տնտեսություններ և նրանց մեջ աշխատողները նրանց գոյության մասին վոչինչ չգիտեն, իսկ յեթե գիտեն ել, ապա շատ թերահավատորեն են մոտենում նրանց գործունեյությանը: Պետք է նրանց կյանքի պայմանների մասին նույնպես մտածել, ինչպես բույսի կյանքի մասին ենք մտածում:

Թե պալարաբակտերիաները և թե ազատ ապրող ու ազոտ կապող բակտերիաներն իրենց կյանքը շարունակելու, լավ արդյունքներ տալու և հողին ազոտային նյութեր տրամադրելու համար պահանջում են վորոշ քանակի սննդայութ, խոնավություն, ոդ և ջերմություն: Եթե այս գործուներից մեկն ու մեկը հողում պակսում ե, նրանց գործունեյությունը կանգ է առնում, չեն բազմանում և չեն զարգանում: Դրա հետևանքով բույսին անհրաժեշտ նյութեր ժամանակին չեն տրամադրում, վորի պատճառով ել բերքը պակաս և ստացվում: Ուրեմն՝ տնտեսության մեջ աշխատողները պետք է մտահոգված լինեն վոչ միայն բույսերի համար լավ պայմաններ ստեղծելու, այլև մտահոգված լինեն կանոնավորելու բակտերիաների գործունեյությունը: Վորպեսզի բակտերիաներին ոդ տրվի, պետք է հողը լավ վարել, գարնան և ամ-

բան ընթացքում հողը փողին և կեղեատել: Այս գործողությունները վոչ միայն հողում ողի պաշարն են ավելացնում, այլև նպաստում են հողի խոնավության պահպանմանը:

Նախքան բույսեր ցանելը, հողին մեռած որգանական նյութեր պետք է տալի Բակտրիաների գործունեյությունը կանոնավորելու համար ծախսված միջոցներն ավելի քիչ են, քան արհետական միջոցներով հողին սննդանյութեր տալը: Իսկ ուստի գյուղատնաեսության նպատակներից մեկն ել այն է, զոր, վորքան կարելի յե, քիչ ներդրությունը կատարելով մեծ ողուտ ստացվի: Իհարկե՛ սրանով յերեկ չենք բացասում արհետական պարարտանյութերի գերն ու նշանակությունը, ընդհակառակը, նրանք միմյանց ոգնում են, միմյանց լրացնում: Մեր գլխավոր աշխատանքը պետք է լինի այն, զոր, վորքան կարելի յե, աշխատել հողի մեջ բնական յերևույթներն ուսումնասիրել և հնարավորության սահմաններում ուժնդացնել հետագա աշխատանքները, վորովհետև բույսերն ու բակտրիաները բնական պայմաններում առաջացած սննդանյութերն ավելի լավ են յուրացնում, քան արհետական պայմաններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ. Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ
ԹԻԹՅՈՒՆԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՑՍԵՐ ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ,

Հայաստանի այս կամ այն շրջաներում թիթեռնածաղկավոր բույսեր ցանելիս նկատի պետք է ունենալ մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր պահանջները, յեթե, որինակ, տվյալ շրջանի՝ պահանով նախատեսված՝ հիմնական կուլտուրաներին խանգարում է, այն ժամանակ չպետք է ցանել: Բայց մենք պետք ե զարկ տանք թիթեռնածաղկավոր բույսի մշակությանը հատկապես այն շրջաններում, վորտեղ նրանց մշակությունը հնարավոր է և ձեռնառ: Թիթեռնածաղկավոր բույսերի մշակությունը, բացի հողը սննդանյութերով հարստացնելուց, ունի և այլ հատկություններ, վորոնց մասին անհրաժեշտ և նույնպես համառոտ հիշատակել:

Թիթեռնածաղկավոր բույսերի մշակությունը մեր զարգացող անասնապահության համար նույնպես մեծ նշանակություն ունի: Այս բույսերը հարուստ սննդանյութեր են պարունակում, վորոնց անասուններին կերակրելն ավելի լավ է, քան վոչ թիթեռնածաղկավոր բույսերով: Թիթեռնածաղկավոր բույսերն ավելի հյութալի յեն և սպիտակուցային-ազոտային նյութերի

մեծ տոկոս են պարունակում: Կենդանիներն այս բույսերն ավելի մեծ ախորժակով են ուտում քան մյուս վոչ թիթեռնածաղկավոր բույսերը: Թիթեռնածաղկավորները վորպես կերարույն անասնապահության համար չատ կարենու են: Քանի զոր Հայաստանի շրջանների մեծագույն մասն անասնապահական ե ամբողջովին անասնապահական բնույթ ե կրում, այս տեսակետից թիթեռնածաղկավոր բույսերի, վորպես կերարույսերի, մշակությանը պետք է զարկ տալի թիթեռնածաղկավոր բույսերի մի ուրիշ կարենու հատկությունն ել այն է, զոր դաշտավարության մեջ մալախոտերի դեմ կավելու համար նըանք վորպես բնական միջոց անփոխարինելի յեն: Բանն այն է, զոր թիթեռնածաղկավորները, հատկապես մաշը, վիկը, առվույտը, սոյան, յերեքնուկը և այլն, ունենալով և լայն ճյուղավորված թե արմատային և թե ցողունային սիստեմ՝ հնարավորություն չեն տալիս մոլախոտերին թիթեռնածաղկավոր բույս ցանած տեղում զարգանալու, վորովհետեւ մոլախոտերն այդ պայմաններում լույս չեն ստանում ու միշտ խավարում են և, յերկորդ՝ իրենց արմատները չեն կարողանում հողում տարածել: Հույսն ու հողից ոգտվելու գայմանները կարենը ֆուկուրներ են բույսերի աճեցողության համար, իսկ մոլախոտերը թիթեռնածաղկավորների հետ յեղած գեպքում զրկվում են վերոհիշյալ պայմաններից: Նրանց կյանքը կանգ ե առնում կամ, վերոհիշյալ պայմաններից, նրանց կյանքը կանգ ե առնում կամ, ինչպես ասում են, թիթեռնածաղկավորները մոլախոտերին խեղողում են: Յեթե մի-յերկու տարի միեւնույն հողամասի մեջ թիթեռնածաղկավոր բույս, որինակ վիկ ցանենք, վորտեղ խիստ տարածված են մոլախոտերը, մենք կտեսնենք, զոր մոլախոտերի թիթվայդ դաշտում խիստ կպակսի:

Բացի վերոհիշյալներից, թիթեռնածաղկավոր բույսերն ունեն մի հատկություն ևս, այն ե՝ նրանք պարունակելով սպիտակուցային նյութերի մեծ տոկոս՝ չատ հաճախ փոխարինում են մարդու մասերին կրանյութերին, ինչպես, որինակ՝ սոյայի, լորու, սիսեսի, վոսպի և այլ հատիկները:

Սբանցից հատկապես սոյան արգեն Ցեվրոպայաւմ ունի անխողոզիական մեծ արժեք:

Ոգավելով սոյայի հատիկների մեջ գտնված հարուստ սննդարար նյութերի հատկությունից՝ նրանից զանազան պահածոներ, կաթ, շոկոլադներ և այլ բաներ են պատրաստում: Զինաստանի ժողովուրդն իր սննդանյութը մեծ մասամբ պատրաստում ե սոյայից: Մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ նույնպես վերջին տարի-

Ներս սկսել են զարկ տալ սոյայի մշակությանը. մեզ մոտ որեցոր լայնանում են սոյայի մշակության տարածությունները:

Բոլոր վերոհիշյալ տեսակնետներից ել գյուղատնտեսության համար, վորպես մշակելի կուլտուրական բույսեր, թիթեռնածաղկավորներն անփոխարինելի յեն:

Այժմ հարց ե առաջ գալիս՝ արդյոք մենք հնարավորություն կունենանք մեր բոլոր շրջաններում այս բույսերից մշակել Թիթեռնածաղկավորները նույնպես իրենց զարգացման համար պահանջում են խոնավություն, ող, ջիրություն և սննդանյութ, իսկ մեզ մոտ այս կամ այն շրջանում այդ ֆակտորների դասավորությունը թիթեռնածաղկավոր բույսերի զարգացմանը խանգարում է. Որինակ՝ Թիթեռնածաղկավոր բույսերի տեսակներ կան, վոր իրենց վեգետացիայի համար պահանջում են բավականին խոնավություն՝ ջուր, իսկ մենք ունենք շրջաններ, վորոնք չորային են:

Այդ շրջանները բավարարվում են միայն մթնոլորտային տեղումներից գոյացած խռնավությունից, իսկ այդ խռնավությունը քիչ ե և չի բավարարում, որինակ, առավույտին՝ ծեղվարդի շրջանում, կարենը ֆակտոր և նաև ջերմությունը. շատ ցուրտ վայրերում թիթեռնածաղկավոր բույսեր չեն աճում. Դրա համար ել ցանվում են տեղական կլիմայական պայմաններին համապատասխան տեսակի թիթեռնածաղկավոր բույսեր:

Դաշտային ջրովի շրջաններում պետք ե ցանել այլ թիթեռնածաղկավոր բույսեր, իսկ նախալեռնային վաղ ջրովի շրաններում՝ այլ թիթեռնածաղկավոր:

Քանի վոր մեզ մոտ կան շրջաններ, վորտեղ ջրի հարցը գեռ կարգավորված չե պետք, և նման շրջանների հողերում այնպիսի թիթեռնածաղկավոր բույսեր մշակել, վոր չորությանը դիմանան, այսինքն՝ քիչ ջուր պահանջնեն, կարճ վեգետացիա ունենան և ջուր հասունանան: Որինակ՝ առավույտը լավ բերք տալու համար իր վեգետացիայի ընթացքում բավականին շատ ջուր ե պահանջում, իսկ յերբ ջուրը պահան և լինում, լավ չի զարգանում և քիչ ել բերք և տալիս. նման շրջանների հողերում, իհարկե, նպատակ չկա առվույտ ցանել: Մինչդեռ քոռոշնան, կորնգանը, սիսեռը, վոսպն այդպիսի տեղերում աճում և բավական լավ բերք են տալիս, բավականանալով միայն մթնոլորտային տեղումներով: Մեզ մոտ կան այնպիսի շրջաններ, վորտեղ վեգետացիոն շրջանը յերկար ե և ջրային պայմաններն ել նպաստավոր:

Ներում թիթեռնածաղկավոր բույսեր մշակելու դեպքում տարվա մեջ կարող ենք յերկու անգամ բերք ստանալ: Որինակ՝ Արարատյան դաշտում և Արարատյան դաշտից վերև՝ նախալեռնային շրջանում կարելի յե ցորենի կամ գարու բերքը հավաքելուց հետո խոզանավար անել և մաշ կամ վիկ ցանել և սեպտեմբերին-հոկտեմբերին մենք կունենանք բավականին լավ զարգացած կանաչ մասսա, վորը քաղելով կարող ենք անասուններին կեր ծառայենք նկատի ունենալով այս կամ այն թիթեռնածաղկավոր բույսի ջրի պահանջը, Հայաստանի այս կամ այն շրջանի կլիմայական ու բնական պայմանները և, վոր գլխավորն ե, մեր յերկրի վերաբնական պայմանները և, մեր յերկրի վերաբնական տնտեսության կառուցվող գյուղատնտեսության ու ժողովրդական տնտեսության ընդհանուր պահանջները կարելի յե հետեւալ թիթեռնածաղկավոր բույսերի մշակումն առաջարկել.

Դաշտային օրջան. — Այս վայրերում, վորտեղ հողերը միանգամայն անպետք են բամբակի կուլտուրայի համար և ջրային հարցը կանոնավորված ե՝ բավարար քանակությամբ ջուր կա, վորպես տեխնիկական բույս, կարելի յե մշակել սոյան, միայն ցանելուց առաջ կամ սերմերը, կամ հողը վարակել սոյայի հատուկ պալարաբակտերիաներով: Կարելի յե մշակել նաև մաշ, առողջայտ, վիկ և լոբի: Վիկը կարելի յե ցանել այս շրջանում վորպես աշնանացան: Մաշն ու վիկը կարող ենք հեղտությամբ ցանել ցորենի կամ գարու բերքը հավաքելուց հետո և հավաքել վորպես խոտ: Այս հողերը, վոր միանգամայն անպետք եյին վորպես խոտ: Այս հողերը, վոր միանգամայն անպետք եյին վարակի համար, թիթեռնածաղկավոր բույսեր ցանելուց միքամբեկի համար և արդեն միանգամայն պետքական կարող են լինել բամբակի կուլտուրայի համար:

Նախալեռնային օրջան. — Այս վայրերում, վորտեղ ջրովի յե, կարելի յե մշակել առաջին կերթին, վորպես կուլտուրական բույս՝ սոյա, ապա՝ վիկ, մաշ, լոբի, առողջայտ, գառուշնա, իսկ վոչ ջրովի տեղերում կորնգան, սիսեռը և վոսպ մշակելի վիկը կարելի յե ցանել թե վորպես զարնանացան և թե վորպես աշնանացան: Աշնանացան ավելի նպատակահարմար ե քան զարնանացանը: Աշնանացան վիկը հետո կարելի յե ցանել կարտոֆիլի վաղահաս տեսակներ, վորով կարող ենք այս շրջանում նույնպես մի տարտեսական այդպիսի տեղերում աճում և բերք ցերցնել: Այս շրջանում նույնպես հացարույսերից հետո կարող ենք ցանել վիկ կամ մաշ՝ աշնանը վորպես խոտ հնձելու համար:

Լեռնային օրջան. — Այստեղ կարելի յե մշակել կորնգան, վիկ

և առվույտ։ Հեռնային շրջանում առվույտի մշակումը պետք է կատարել միայն փորձեր կատարելուց հետո, վարովին կան տեղեր, վորտեղ առվույտ չի գնում։

Բացի թիթեանածաղկավոր բույսերից մշակումից և ըստ շրջանների դասավորելուց, պետք է նաև ուշադրություն գարձնել տվյալ շրջանների հողերի վրա։

Սրբյոք այդ հողերը ցանված թիթեանածաղկավոր բույսերին հատուկ պալարաբակտերին պարունակում են, թե վոչ։ Եթե հողերը չեն պարունակում տվյալ թիթեանածաղկավոր բույսերին հատուկ պալարաբակտերին, միևնույն ե՛ բույսերը լավ բերք չեն կարող տալ մինչև վոր այդ հողերին պարաբանյութեր չտանք։ Անհրաժեշտ է նման հողերը պատվաստել այս կամ այն թիթեանածաղկավոր բույսերին հատուկ մաքուր պալարաբակտերին կուլտուրաներով։ Զանազան պահանջման վոր պալարաբակտերին բարձր ջերմաստիճան չեն պահանջում։ Նրանք կարող են զարգանալ թե դաշտային, թե նախալեռնային և թե լեռնային շրջանների կլիմայական ու հողային պայմաններում։

Վորպեսդի կարողանանք թիթեանածաղկավոր բույսերի տված տնտեսական եմեկար պարզել, բերենք Գերմանիայում կատարված ուսումնասիրությունների արդյունքը, վոր արտահայտված ե հետեւյալ ազյուտակի մեջ։

Գերմանացիներն իրենց հողերին ազատ են տալիս
պարաբանյութերի արհեստական ձևով 850,000 տոն
Գործադրի միջոցով 600,000 >
Հնդկամենը 950,000 տոն

Վեցնում են 25 միլիոն հեկտար հողեր՝ հեկտարից 55 կմ N 1,375,000 >
4 միլիոն հեկտար թիթեանածաղկավորներից՝ հեկտարից 100 կմ տոն
40000 տոն

Աղոտ են վեցնում ընդ. 1,755,000 տոն,
ուրեմն հողին ընդամենը տալիս են 950000 տ., ազոտ և փոխարենն ստանում են 1775000 տ. ազոտ, վորից 825000 տ. նրանք ստանում են հողից։ Այդ 825000 տոնն ազոտի 400000 տոնը կապում են թիթեանածաղկավոր բույսերը, իսկ մնացած 425000 տոնը՝ հողում ազատ ազոտ կապող բակտերիաները։ Եթե մենք թիթեանածաղկավոր բույսերի կապած ազոտը վերածենք դրամների, կսացվի հետեւյալը, մեկ կգ ազոտն արժեն մեկ մարկ կամ 50 կոտեկ, իսկ 400000 տոն ազոտը կարժենա 400,000,000 միլ. մարկ կամ

200000000 միլ. ուրեմն, տարեկան նրանք տալիս են տնտեսում 200000000 միլ. ու յեկամուտ։


Յեզրակացություն։— Մեր նկարագրած բոլոր փաստերից և տվյալներից պարզվեց, թե թիթեանածաղկավոր բռյաների մշակությունն ինչ մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության համար, հատկապես այն հողերում, վորոնց մեջ պալարաբակտերիաներ կան և ազատ ազբող ու ազոտ կապող բակտերիաների գործունեյնությունը ուժեղ ե։ Մեզ մոտ նույնպես պետք ե աշխատ կարկ տալ հողի պատվաստմանը, վորովհետեւ մեր հողերից շատերը պալարաբակտերիաներից գուրկեն, իսկ յեթե կան եւ նըսանց շատերը պալարաբակտերիաներից գուրկեն, իսկ յեթե կան եւ նըսանց ազոտ կապող ինտեսիվությունը թույլ ե։ Թիթեանածաղկավոր բռյան մշակությունը կանոնավոր հիմքերի վրա պետք ե դնել և ցանքաշրջանառությունն այնպես կազմակերպել, վոր նըսանց անպատճառ մտնի թիթեանածաղկավոր բույսերի մշակությունը, վոր թե հողը կուժեղացնի և թե տնտեսությունը կապահովի կերպույսերով։

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հողում ապրանքագույն տեսակների համար կարեռ հանդիսացող բակտերիաների գործունեյնության վրա։

Հողի մեջ մեռած որգանական նյութեր պետք ե մուծել, հողը պետք ե հարստացնել հումուսային նյութերով, վորոնք նպաստում են բակտերիաների գործունեյնությանը, վորից գյուղատնտեսությունը կշահվի, ստանալով բարձր և վորակով բերք։

Այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է հողն ուսումնասիրել և նրա մեջ կատարվող յերկույթներին ծանոթանալ։ Ցերեմոն հողում տեղի յեն ունենում անյպիսի յերկույթներ, վորոնք գյուղատնտեսության համար անհրաժետ չեն և անգամ վնասակար են։ Այդ յերկույթները պետք ե վոչնչացնել կերպուելով հողամշակության կուլտուրական յեղանակներ։ Նման կերպուելով հողամշակության կատարելու համար աշխատանքներն անհատ տնտեսություններում կատարել հասարակական կառույց կարող են կազմակերպել միայն կոլեկտիվ և խորհային կերպով կարող են կազմակերպել միայն կոլեկտիվ և խորհային տնտեսություններում, վորտեղ նման աշխատանքներ կատարելու վոշ մի գժավության չի կարող հանդիպել։ Կոլեկտիվի և խորհրդագային տնտեսության հողերը կարելի յեն հեշտությամբ ուսումնասիրել և նույնիսկ այնտեղ վոքրիկ փորձադաշտեր ունենալ վոր հնարավոր ե։ Այդ փորձադաշտերի արդյունքներն ուսումնասիրելով կարելի յեն պատել բերքատվության բարձացմանը, առաջադրելով

այս կամ այն աշխատանքը, վոր անհրաժեշտ և հողը մշակելու, համար, իսկ վոր ամենից կարևորն եւ կոլեկտիվի անդամներն ու խորհութեասության մեջ աշխատող բանվորները հնարավորություն կունենան մոտիկից ծանոթանալ, հողին և իրենց աշխատանքն այնպես դասավորել, հողն այնպէս մշակել, վոր անտեսությունը մեծ արդյօւնքեր ստանա.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Թիթեռնածղկավոր բույսերի մշակության նշանակությունը	3
2. Բույսերի սննդառությունը	4
3. Որդանածին նյութեր	6
ա) ածխածին	6
բ) թթվածին և ջրածին	8
գ) ազոտ	9
4. Բույսեր, վորոնք ողի ազոտով սնվելու ընդունակ են	11
5. Պալարաբակտերիաներ	15
6. Հողի պատվաստումը	16
7. Հողը պարաբացնելու կամ պատվաստելու բակտերիալ պրեպարատ	26
8. Միքանի խոսք հողում ազատ աղբոզ և ազոտ կապող բակ. մաս	26
9. Հայաստանի վոր զբաններում և ինչ տեսակի թիթեռնածղակավոր բույսեր պետք ե ցանել	33

Հեղինակ Արքայի և արքագրի Դար. Հակոբյան
Քլավիսի լիազոր Ս-472
Հրատ. № 336 պատվ. № 178, տիրաժ 2000
Հանձնված և արտադրության 1936 թվի մարտի 4-ին
Ստորագրված և տպագրելու 1986 թվի ապրիլի 17-ին
Գրքի հրատակ ազարան, Երևան, Նալբանդյան № 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0936614

17 МАЯ 1936

361

ԳՐԱԾ 60 Կ.

||

28193



Колхозная библиотека

А. Паносян

Значение возделывания
бобовых растений

Сельхозгиз

1936

Эривань